# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

15 ՀՈՒԼԻՍԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մրազ Միրոյան, Նաիրա Գեվորգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գեվորգյանը

Լսեցին
*ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին՝

որոշում է.

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 15.07.2024թ. հերթական վեցերորդ նիստի օրակարգը.

1. Մեծաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին.

2. Մեծաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 29-ի թիվ 9-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Սեփականության իրավունքով 45000/քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքով ձեռքերված MIKROTIK HEX-S (RB760IGS) մոդելի երթուղիչ սարքը որպես

համայնքային սեփականության գույք ճանաչելու և 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

4. <<Մեգա Ստոուն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման համար նախնական համաձայնության տրամադրման մասին:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի պահանջներով, Մեծաձոր համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ի գիտություն ընդունել Մեծաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին
*ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.03.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37 -րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ուժը կորցրած ճանաչել Մեծաձոր համայնքի ավագանու 29.03.2024թվականի թիվ 9-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին
*ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ MIKROTIK HEX-S (RB760IGS) ՄՈԴԵԼԻ ԵՐԹՈՒՂԻՉ ՍԱՐՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին

որոշում է

1. Սեփականության իրավունքով 45000/քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքով ձեռքբերված MIKROTIK HEX-S (RB760IGS) ՄՈԴԵԼԻ ԵՐԹՈՒՂԻՉ ՍԱՐՔԸ ճանաչել որպես համայնքային սեփականության գույք:

2. Հաստատել Մեծաձոր համայնքի 2024 թվականի սեփականության գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
*<<ՄԵԳԱ ՍՏՈՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Մեծաձոր համայնքի ավագանին

որոշում է

Տրամադրել նախնական համաձայնություն՝ <<Մեգա Ստոուն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման համար:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱԲԱՍՅԱՆ

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ

ՀԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝ Նաիրա Գևորգյանը*

____________